Առ 1 յուլիս Հայաստանի Վարկային Կооպերատիւների Միութիւնը — Հայվարկը, ունէր 23 անդամ ընկերութիւններ. 12,121 անդամով, 530,640ր. դրամագլխով. ընդունած աւանդը հասնում էր 1,142,812ր.: Փոխառութիւն էին կնքել 103,175ր. և անդամներին մինչև յունիս 1 փոխատութիւն արել 815,350ր.: Ցիշեալ 23 ընկերութիւններից 10 հին գործող ընկերութիւններ էին, 11 վերաբացած, իսկ 2 նոր հիմնուած: Այդ 23 ընկերութիւններին Հայվարկը 10,900,000ր. վարկ էր բաց արել, որից առ 1 յուլիս օգտուել էին 7 ընկերութիւնները՝ 1,500,000 բուբլու: Կառավարութիւնը Հայվարկին տրամադրել էր 40 միլիոն բուբլու վարկ: Հայվարկն ընդունում էր առանց սահմանափակման աւանդներ և ընթացիկ հաշիւներ ու անարգել վճարում էր ինչ դումար և պահանջէր: Իր անդամ-ընկերութիւնների համար Հայվարկը տպագրել էր կանոնադրութիւն, մատեաններ, պատրաստել բլանկներ ու դիւանական պիտոյքներ և այլն:

Նոյն եռանդն ու կենդանութիւնը տեսնում ենք և կեանքի միւս ասպարէզներում: Ապրիլ 20-ի նիստում կառավարութիւնը որոշել էր կազմել միջվարչական յանձնաժողով՝ արագացնելու համար կառավարական մի շարք գործառնութիւնների փոխանցումը գաւառական ինքնավարութիւններին: Յանձնաժողովի նախագահ էր նշանակուել ներքին գործոց նախարարութեան տեղական ինքնավարութիւնների և քաղաքային բաժնի վարիչ Հ. Մելքումեանը, անդամներ գիւղատնտեսական նախարարութիւնից՝ Ստ. Կամսարականը, աշխատանքի՝ Վ. Բաբայեանը, խնամատարութեան՝ Ռ. Քաջբերունին, հանրային կրթութեան՝ Պ. Սոտնիկեանը, արդարադատութեան՝ Յ. Ամիրխանեանը, հաղորդակցութեան՝ Ինժ. Մելիք-Շահնազարեանը, ելևմտական՝ Պ. Զաքարեանը, Երևանի գաւառային ինքնավարութեան նախագահ Յ. Թադէոսեանը: Միջվարչական յանձնաժողովը մի շարք նիստերում մշակել էր այն պայմանները, որոնց հիման վրա գաւառային ինքնավարութիւններին պիտի փոխանցէին կառավարական մի շարք իրաւունքներ ու հիմնարկութիւններ:

Մինչև յունիս 1 արդէն պետական բոլոր տարրական դպրոցները, բոլոր հիւանդանոցներն ու բժշկական կայանները, գիւղատնտեսական տեղական պահեստները, սերմանման մարմիններն ու գիւղատնտեսական կայանները, միլիցիան և այլն փոխանցուած էին գաւառական ինքնավարութիւններին, որոնք հետզհետէ կարևոր տեղ էին գրաւում պետութեան կեանքում: Մասնաւորապէս յաջող գործունէութիւն էին ցոյց տալիս Երևանի և Էջմիածնի գաւառական ինքնավարութիւնները:

Արդարադատութիւնը գարգանում էր անկանոն պայմաններում: Սովորական դատարանները չէին վերացուած, բայց դատերի մեծ մասը տեսնում էր արտակարգ դատարանների միջոցով: Մայիս 14-ից մինչև սեպտեմբերի սկիզբը Հայաստանում 234 քաղաքական բանտարկութիւններ էին կատարուել, որոնցից 120 հոգի ազատ էին արձակուել, 3 հոգի դատապարտուել մահապատժի և բանտերում մնում էին՝ 15 հոգի բանտարկութեան դատապարտուած,